«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Առարկա՝

Հեղինակ՝

անուն, ազգանուն

Ուսումնական հաստատություն՝

ԵՐԵՎԱՆ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...3

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

1.1. Խաղի արժեքը կրտսեր դպրոցական տարիքի երեխայի անհատականության ձևավորման գործում.....……6

1.2. Խաղի ազդեցությունը երեխայի հոգեկանի զարգացման վրա…….....9

ԳԼՈՒԽ 2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ

2.1. Խաղային իրավիճակները որպես կրտսեր դպրոցականի ուշադրության զարգացման խթան.....……11

2.2. Խաղի ուսուցման պրոցեսը կրտսեր դպրոցականների մոտ……13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Այսօր դպրոցի խնդիրը ոչ միայն սովորողների կրթամակարդակը բարձրացնելն է, այլև նրանց գիտելիքները լրացնելու և ժամանակակից տեղեկատվության օվկիանոսում կողմնորոշվելու, հետազոտելու կարողություններ ձևավորելը: Հետազոտական մտածողության գործընթացը ենթադրում է ինչպես նորի որոնումը, այնպես էլ արդեն ձեռք բերած գիտելիքների գործածումը: Ցանկացած հետազոտական աշխատանք որոնողական քայլերի շղթա է, որի հաջողությունը պայմանավորված է ուսուցչի աշխատանքի իմաստալից պլանավորումից:

Կրթությունը, ըստ հանրակրթական պետական չափորոշչի, ներառում է սովորողի յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժա-հոգեբանական աշխատանքները, մշակութային, բարոյական, ազգային ու համամարդկային արժեքները: Ժամանակակից մանկավարժության մեջ կրթության առաջնային նպատակ է ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և սովորելու մշակույթ դաստիարակելը:

Աշակերտը պետք է գիտելիքներ ստանա ոչ թե պատրաստի ձևով, այլ դրանք ձեռք բերի որոնողական, հետազոտական, համագործակցային աշխատանքի արդյունքում: Սովորելու գործունեության զարգացմանն են նպաստում համագործակցային ուսուցումը, ճանաչողական-որոնողական աշխատանքները, խաղային տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը, ինքնագնահատման կարողությունների զարգացումը: Արդի կրթական համակարգում, ընդհանրապես, տարրական դասարաններում մասնավորապես բացառիկ տեղ է հատկացվում սովորողներին՝ խաղային ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու կարողությունների ձևավորումը:

Ուստի մերօրյա մանկավարժի գործունեությունը չպետք է սահմանափակի սովորողի ստեղծագործական որոնումների շրջանակը: Ընդհակառակը ուսուցման գործընթացն աշակերտներին պետք է <u>ինքնադրսևորման</u> և <u>ինքնազարգացման</u> հնարավորություն ընձեռնի: Դա իրականացվում է սովորողների կողմից նորը փորձարկելու, բացահայտումների միջոցով: Խաղը մարդուն ուղեկցել է պատմական զարգացման բոլոր փուլերում: Այն եղել է ոչ միայն զվարճանքի զբաղմունք, այլև որոշ

դեպքերում կարողությունների ձևավորման միջոց: Խաղային գործունեության ժամանակ կարելի է երեխային ճանաչել բոլոր կողմերով:

Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունն ու անհատականությունը պարզ արտացոլվում է խաղի մեջ: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության գործում խաղին հատուկ կարևորություն է տրվում: Մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում խաղի դերին և ուսուցմանը խաղի միջոցով: Երեխաների ուսուցման և դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունեն խաղերը: Երեխան սովորում է խաղալու ընթացքում: Խաղային իրավիճակում գիտելիքներն ավելի հեշտ են ընկալվում: Պասիվ երեխաների մաթեմատիկական և լեզվական ունակությունների ձևավորման ու զարգացման գործում մեծ դեր է խաղում խաղը:

Երբ երեխան մուտք է գործում դպրոց առաջադար գործունեություն է դառնում ուսումը, երեխան չի կարողանում զերծ մնալ խաղերից: Իսկ երբ ուսումը տարվում է խաղերով, դրանք երեխայի համար դառնում են ավելի հետաքրքիր և ցանկալի: Խաղի միջոցով ուսումնական գործունեությունը կազմակերպելիս անհետանում են որոշակի խանգարող հանգամանքները ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ հարաբերությունները:

Այսպիսի իրավիճակում աշակերտը կարողանում է անկաշկանդ արտահայտել իր մտքերը: Խաղի միջոցով աշակերտը աննկատ ընդգրկվում է ուսուցման այս կամ այն գործընթացում և շատ հաճախ կարողանում է իր կարծիքը արտահայտել առաջացած խնդիրներում, երեխան ավելի է կենտրոնանում և մտապահում ուսուցանվող նյութը: Հետաքրքիր խաղը ստեղծում է աշխույժ, զվարթ տրամադրություն, երեխաների կյանքը դառնում լիարժեք և բավարարում նրանց պահանջմունքը:

Նշյալով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը:

<u>Հետազոտության նպատակը</u> և <u>խնդիրները:</u> Հետազոտության հիմնական նպատակն է խաղերի միջոցով ներկայացնել և ուսումնասիրել կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացի կազմակերպմանը: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները՝*

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Պարզաբանել կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում խաղի դերը:
- Լուսաբանել խաղի ուսուցման պրոցեսը կրտսեր դպրոցականների մոտ:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, որոնք իրենց հերթին բաղկացած են ենթագլուծներից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

1.1. Խաղի արժեքը կրտսեր դպրոցական տարիքի երեխայի անհատականության ձևավորման գործում

Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է, որի ընթացքում երեխաներն առաջին անգամ շփվում են իրենց հասակակիցների հետ: Նրանց միացնում են ընդհանուր նպատակը, դրան հասնելու միասնական ջանքերը, ընդհանուր հետաքրքրություններն ու ապրումները: Այդ պատճառով էլ խաղը երեխաներին սովորեցնում է իրենց գործողություններն ու մտքերը ծառայեցնել որոշակի նպատակի, օգնում դաստիարակելու նպատակասլացություն: Երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի անդամ, արդարացիորեն գնահատել իր և ընկերների գործողություններն ու արարքները: Դա նշանակում է, որ միջավայրը թուլացնում է երեխայի զգացմունքային լարվածությունը և տրամադրում խաղին: Երեխան դառնում է նախաձեռնող և սոցիալապես ակտիվ: Անգամ ամենապասիվ աշակերտները մտնում են խաղի մեջ մեծ ցանկությամբ՝ օգտագործելով բոլոր ջանքերը, որպեսզի խաղի ժամանակ ընկերներից հետ չմնա: Խաղի ընթացքում հետևելով երեխայի վարքին կարելի է դատել ընտանիքում մեծահասակների հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին: Միաժամանակ երեխան փորձում է կատարել մեծի դեր՝ հասկանալով հանդերձ, որ ինքը դեռ մեծ չէ: Նմանակելով մեծահասակների տնային գործերը՝ երեխաները յուրացնում են կենցաղային աշխատանքի որոշ հմտություններ: Խաղերի ճնշող մեծամասնությունն արտացոլում է նաև տարբեր մասնագիտության մարդկանց աշխատանքը:

Այսպիսով՝ այստեղից գալիս ենք այն եզրահանգման, որ խաղի միջոցով ընդլայնվում և խորանում են երեխաների հետաքրքրությունները տարբեր մասնագիտությունների նկատմամբ, և ձևավորվում է հարգանք աշխատանքի հանդեպ[1]: Եվ արդյունքում երեխայի մեջ ձևավորվում է մեծի հասարակայնորեն արժեքավոր դեր կատարեու դրդապատճառը: Սակայն խաղային գործունեություն իրականացնելուց առաջ պիտի որոշել խաղի կանոնները: Դրանք բխում են գործունեության բնույթից, թեմայից և այլն: Երեխաներն ընդունում են այդ կանոնները, ենթարկվում դրանց սահմանած պայմաններին, անհրաժեշտության դեպքում՝ փոխում: Այս կերպ վարժվում են հասարակական կյանքի ապրելակերպին՝

իրականացնելով ինքնուրույն ու ստեղծագործական գործունեություն: Ուստի խաղի մեջ մտավոր ակտիվությունը միշտ շաղկապված է երևակայությանն ու խոսքին. որքան զարգացած է մարդու մտածողությունը, այնքան հստակ է արտահայտվում նրա խոսքը: Իսկ գրագետ խոսքը վկայում է մարդու զարգացած մտածողության մասին: Իսկ խոսքի զարգացման գործընթացն առավելագույն արդյունք է տալիս երբ ուսուցումն ընդանում է խաղերի ձևով, և ընթացքում օգտագործվում են ակտիվ բառապաշարը հարստացնող սյուժետային նկարներ, աշխուժացնող վարժություններ: Խաղի կանոնները որոշելուց հետ պետք է բաշխել դերերը: Դերերը բաշխելիս պետք է նկատի ունենալ ոչ թե այն, թե ով ավելի լավ կկատարի այդ դերը, այլ այն, թե տվյալ դերն ինչ դրական ազդեցություն կունենա երեխաների փոխհարաբերությունների վրա: Դերային խաղերի համար կարևոր են նաև մասնակիցների կարողություններն ու հմտություններն, որոնց նրանք տիրապետում են: Դրանք ընդհանուր ունակություններն են, որոնք պահանջվում են ցանկացած խաղում՝ հաղորդակցման ունակություն, խմբում աշխատելու կարողություն, ղեկավար որակներ, դիրքորոշումն պաշտպանելու ունակություն, անընդհատ փոփոխվող պայմաններում գործելու ունակություն և այլն: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ խաղային գործունեության միջոցով երեխան պիտի իր մեջ ավելացնի դրականն ու նվազեցնի բացասական որակները[4]:

Խաղերը, որպես ուսուցման ձև իրենց բնույթով բարդ են, քանի որ դպրոցում հետապնդում են երկու նպատակ՝ ուսուցողական և խաղային: Երեխաները մասնակցելով խաղին սովորում են, իսկ ուսուցիչը ղեկավարելով խաղը՝ սովորեցնում: Ուսուցչի դերը այս դեպքում ավելի ընդգծված է երբ խաղը հանդես է գալիս որպես նոր գիտելիքների հաղորդման միջոց: Խաղերը՝ որպես ուսուցման յուրահատուկ ձև ավելի ցայտուն են արտահայտվում, երբ դրանք համատեղում ենք պարապմունքների հետ: Դասի ժամանակ խաղերն անցկացվում են աշակերտական մեծ ու փոքր խմբերով՝ ուսուցչի ղեկավարությամբ, որոնց անցկացման նպատակն է հին նյութի և աշակերտին հանձնարարվող նոր թեմայի ավելի արդյունավետ յուրացումը[2]: Խաղերի մեջ ներգրավված պետք է լինեն բոլոր աշակերտները: Երբ դասն անցկացվում է խաղի միջոցով, որի ժամանակ դասի թեմային

համապատասխան պարագաններ են օգտագործվում ավելի հեշտ է նյութն ընկալվում աշակերտների կողմից:

Մանկավարժության և հոգեբանության ոլորտը ներկայացնող մասնագետները գտնում են, որ երեխայի անհատականությունն ու աշխարհընկալումն առաջին հերթին լիարժեք և ամբողջական կերպով արտահայտվում են խաղի միջոցով: Այն երեխայի համար ոչ միայն կենսաբանական ներքին պահանջ է, այլև ճանաչողության միջոց և ուսուցման բաղկացուցիչ մաս: Խաղն ունի այնպիսի մանկավարժական դերակատարում, որ կարող է երեխային ընդգրկել ակտիվ ուսուցման մեջ: Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում և հեշտությամբ է մտապահում թե իր և թե իր ընկերների արտահայտած մտքերն ու բազմաբնույթ գործողությունները: Ոչ ոք չի կարող հերքել, որ 6-8 տարեկանում երեխան ընկալում է և կարող է ըմբռնել բազմաբնույթ տեղեկատվություն: Նա դրանով զարմացնում է իր շրջապատին սակայն նրա իմացական կարողությունները, կամային որակներն ու սոցիալական հմտությունները զարգանում են հաջորդ դասարաններում: Տարրական դասարաններում երեխայի համար խիստ կարևորն է խմբով որևէ խաղի մասնակցելը: Դա ինքնաարտահայտման միջոց է դառնում յուրաքանչյուր երեխայի համար: Խաղի միջոցով բացահայտվում է նրա մեջ թաքնված ներուժը[11]:

Մանկավարժական տեխնոլոգիայի կիրառման հիմնական նպատակներից մեկը աշակերտի ուսուցման գործունեության ակտիվացումն է: Ակտիվության սկզբունքը ենթադրում է, որ ուսումնական գործունեությունը պետք է պարունակի մոտիվացիայի բարձր մակարդակ, գիտելիքների, կարողությունների յուրացման պահանջմունք, արդյունավետություն և համապատասխանություն սոցիալական նորմերին: Խաղային ուսուցման տեխնոլոգիան ակտիվ ուսուցման իրականացման տեխնոլոգիաներից է[2]:

Երեխայի մտավոր կարողությունների ձևավորման հիմնական խնդիրներից մեկը մտածողությունը և խոսքի զարգացումն է: Այս կարողությունները ձևավորվում և զարգանում են շրջապատող իրականությունը ճանաչելու ընթացքում: Հաշվի առնելով այս հանգամանքը, ուսուցիչը մեծ ուշադրություն է դարձնում այն մեթոդներին ու եղանակներին, որոնց կիրառումը նպաստում է երեխայի մտավոր գործունեության, ինքնուրույն մտածողության ձևավորմանը, սովորեցնում է

փոփխվող իրադարձություններում գտնվել ձեռք բերված գիտելիքներից և փորձից, իր առջև դրված խնդիրներն համապատասխան ճիշտ ընտրելու անհրաժեշտ նյութերը, բառերը, խոսքը[9]:

Դպրոց հաճախելով վեց տարեկան երեխան շրջապատողների հետ մտնում է նոր, ավելի բարդ հարաբերությունների մեջ, բարդանում է նրա խաղային և աշխատանքային գործունեության ձևերն ու բովանդակությունը: Կյանքը նրա առջև դնում է նոր խնդիրներ, որոնց լուծման համար նա պետք է իմանա նաև երևույթների էական թաքնված կապերը: Կյանքի բովանդակության այսպիսի փոփոխությանը նոր դպրոց հաճախող երեխայից պահանջվում է ավելի կատարելագործված մտավոր գործունեություն: Երեխային մտավոր աշխատանքի տրամադրելու համար անհրաժեշտ է խաղը դարձնել հետաքրքիր, զբաղեցնող, միշտ շարժող: Խաղի ճիշտ կազմակերպումն ու անցկացումն երեխային հնարավորություն է տալիս խաղի, խաղային ձևի միջոցով ստանալ անհրաժեշտ գիտելիքներ, իսկ ուսուցչին՝ զարգացնել երեխաների մտավոր գործունեության տարբեր կողմերը[5]:

Երեխաներին նոր գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև գիտելիքների ամրապնդման նպատակով դպրոց հաճախելու հենց առաջին օրվանից անցկացվում են խաղեր՝ համատեղելով նաև օրվա նյութի հաղորդման հետ: Քանի որ երեխաների մոտ այնքան զարգացած չեն ուշադրությունը, հիշողությունը և հոգեկանմյուս պրոցեսները՝ ավելի բարդ մեթոդներ կիրառելու համար օգտագործվում են խաղերը՝ նրանց տարիքային խմբի առանձնահատկությունները և մտավոր կարողություններին համապատասխան:

Խաղն երեխայի միակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման, ուշադրության կենտրոնացման կարևոր միջոց է, որը բացահայտում է երեխայի բնավորության բոլոր կողմերը: Խաղի միջոցով կարելի է ոչ միայն կրթել այլ նաև դաստիարակել երեխային[9]:

1.2. Խաղի ազդեցությունը երեխայի հոգեկանի զարգացման վրա

Խաղային գործունեության բարդացումը նպաստում է երեխայի հոգեկանի զարգացմանը: Խաղի օգնությամբ ձևավորվում են երեխայի մտավոր որակներն ու

անհատական հատկանիշները։ Ժամանակի ընթացքում խաղից բխում են այլ գործողություններ, որոնք կարևոր են դառնում մարդու հետագա կյանքում։

Խաղը հիանալի զարգացնում է հիշողությունը, ուշադրությունը, քանի որ դրանում երեխան պետք է կենտրոնանա մանրամասների վրա, որպեսզի հաջողությամբ ընկղմվի խաղի իրավիճակում։ Երևակայությունը զարգանում է դերային խաղերի միջոցով։ Փորձելով տարբեր դերեր կատարել՝ երեխան ստեղծում է նոր իրավիճակներ, որոշ առարկաներ փոխարինում մյուսներով[3]։

Նշվում է խաղային գործունեության ազդեցությունը երեխայի անհատականության ձևավորման վրա, ով ձեռք է բերում հաղորդակցման հմտություններ, սովորում է կապ հաստատել հասակակիցների հետ, ուսումնասիրում է մեծահասակների վարքն ու հարաբերությունները։ Նկարչությունն ու կառուցումը շատ մոտ են խաղային գործունեությանը։ Միևնույն ժամանակ, դրանք պարունակում են նաև նախապատրաստություն աշխատանքի համար։ Երեխան փորձում է՝ ինչ-որ բան անելով իր ձեռքերով, մինչդեռ անտարբեր չէ արդյունքի նկատմամբ։ Այս գործունեության ընթացքում նա անպայման պետք է գովաբանվի, քանի որ գովասանքը նրա համար կդառնա կատարելության հասնելու նոր խթան։ Երեխայի կյանքում խաղը նույնքան կարևոր է, որքան մեծահասակի համար աշխատանքը կամ աշակերտի համար դպրոցը։ Մանկավարժները դա գիտեն, բայց կարևոր է, որ ծնողները նույնպես դա հասկանան[6]։

Երեխաների հետաքրքրությունները պետք է ամեն կերպ զարգացնել, խրախուսել նրանց կողմնորոշումը դեպի լավագույն արդյունք՝ հաղթանակ։Երբ երեխան մեծանում է, նա պետք է առաջարկի խաղալիքներ, որոնք կօգնեն նրան մտավոր առաջադիմել։ Ծնողները երբեմն պետք է խաղան երեխայի հետ, քանի որ նա ավելի կարևոր է համարում համատեղ խաղը։

ԳԼՈՒԽ 2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ

2.1. Խաղային իրավիճակները որպես կրտսեր դպրոցականի ուշադրության զարգացման խթան

Դպրոցական կյանք մուտք գործելու սկզբնական շրջանում երեխայի հոգեկանը լուրջ փոփոխություններ է կրում: Նա ձեռք է բերում կյանքի նոր ռեժիմի հետ կապված կարևոր սովորություններ և փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերություններ է հաստատում ուսուցիչների և ընկերների հետ: Ուսումնական նյութի նկատմամբ առաջ եկած հետաքրքրությունների հիման վրա նրանում դրական վերաբերմունք է ձևավորվում ուսուցման նկատմամբ: Այդ հետաքրքրությունների հետագա զարգացումն ու ուսուցման նկատմամբ երեխայի վերաբերմունքի փոփոխությունները կախված են նրանց ուսումնական գործունեության ձևավորման պրոցեսից: Որպեսզի ուսուցման նկատմամբ երեխայի հետաքրքրությունը չկորի, պետք է այն հետաքրքրի երեխային, գրավի նրա ուշադրությունը[7]:

Կրտսեր դպրոցականների կամածին ուշադրությունը անկայուն է, քանի որ նրանք դեռևս չունեն ինքնակարգավորման ներքին միջոցներ: Նրաք հեշտությամբ շեղվում են դասից, մտքով թռչում հեռուներ: Երեխաների ոչ կամածին ուշադրությունը կայուն է այնքան ժամանակ, քանի դեռ առարկան հետաքրքրում է երեխային: Հենց որ հետաքրքրությունը թուլանում է, երեխայի ուշադրությունը շեղվում է այլ առարկաների վրա: Ինչպես գիտենք՝ առանց զարգացած ուշադրության անհնար է կազմակերպել ուսուցման գործընթացը[1]: Երեխան պետք է կարողանա որոշակի ժամանակահատվածում կենտրոնանալ որևէ խնդրի, հանձնարարության կատարման վրա, տեղափոխել ուշադրությունը մեկ այլ խնդրի վրա: Ուշադրության կայունությունը պայմանավորված է նաև մտածողության ղարգացմամբ: Եթե երեխայի մտածողության վերլուծական հնարավորությունները նրան թույլ են տալիս ընկալվող առարկայի մեջ բացահայտել նորանոր կողմեր ու հատկություններ, ապա դրանով իսկ պահպանվում են նրա հետաքրքրությունն ու ուշադրությունը:

Երեխայի կամածին ուշադրաության ծագման պրոբլեմը գլխավորներից մեկն է: Կրտսեր դպրոցականի կամածին ուշադրության զարգացմանը նպաստում են գործունեության կազմակերպման ձևերը՝ խաղը և ուսումնական գործունեությունը,

որը դպրոց գնալուց առաջ երեխայի կյանքում արդեն զգալի տեղ է զբաղեցնում: Այնուամենայնիվ, կրտսեր դպրոցականի կամածին ուշադրությունը դեռևս անկայուն է. նրանք ենթարկվելով իրենց ներքին մղումներին՝ հաճախակի փոխում են իրենց ընկալման օբյեկտներն ու գործունեության ուղղվածությունը, կատարում են այն, ինչ հետաքրքիր ու հաճելի է իրենց համար: Կամածին ուշադրության զարգացմանը մեծ չափով նպաստում է ուսումնական ու աշխատանքային գործունեությունը: Կամածին ուշադրության զարգացման պայմաններից է նաև պրոբլեմային ուսուցումը: Ուսուցումը պետք է կազմակերպել՝ օգտագործելով որքան հնարավոր է խաղալիքներ, դիդակտիկ խաղեր[7]: Տարիքային այս փուլում երեխան իրականացնում է գործունեության երեք տեսակներն էլ՝ խաղ, ուսում, աշխատանք, սակայն առաջատարը խաղային գործունեությունն է, որը ուսուցման մեթոդների ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել: Խաղը համարվում է երեխայի ուշադրության զարգացման անկրկնելի խթան: Խաղային իրավիճակները դասը դարձնում են հասկանալի և հետաքրքիր, զարգացնում կողմնորոշվելու կարողությունը, հնարամտությունը և երևակայությունը: Խաղի ժամանակ ակտիվանում են անգամ պասիվ աշակերտները, ովքեր խաղի միջոցով ավելի հեշտ են յուրացնում, ավելի լավ մտապահում ուսումնական նյութը[10]:

Դիդակտիկ նյութերը ուսուցչի ձեռքին կարևոր են կրտսեր դպրոցականի ուշադրությունը զարգացնելու հարցում: Հայտնի է, որ կրտսեր դպրոցականը հասկանալով սովորում և մտապահում է այն, ինչը իրեն հայտնի է, ինչին ինքը ծանոթ է, տեսել է: Կրտսեր դպրոցականի ուշադրությունը առավել կայուն է արտաքին (այլ ոչ թե բուն մտածական) գործողություններ կատարելիս[4]: Ուստի դասերի ընթացքում այս առանձնահատկությունը պետք է օգտագործել՝ մտավոր գործողություններից անցնել գրաֆիկական սխեմաների, նկարների, մանրատիպակների, ապլիկացիաների ստեղծմանը: Հարկավոր է հիշել նաև, որ կրտսեր դպրոցականը շուտ հոգնում է միևնույն աշխատանքը կատարելիս[8]: Այդ պատճառով փորձված ուսուցիչը դասի ընթացքում հերթափոխում է ուսումնական աշխատանքի տարբեր տեսակները (տարբեր եղանակներով կատարվում է բանավոր հաշիվ, խնդիրների լուծում և արդյունքների ստուգում և այլն) և կանխում է երեխաների մոտ հոգնածության առաջացումը[8]:

2.2. Խաղի ուսուցման պրոցեսը կրտսեր դպրոցականների մոտ

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ շփվելով, մենք մեր առջև դնում ենք խնդիր զարգացնելու երեխայի ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործունեությունը և այլն: Կրտսեր դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր որտեղ կզարգանան սովորողների դռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնությունը, ինչ-որ բան սովորելու:

Խաղալով երեխան հասկանում է ինքնիրեն, ճանաչում է իրեն շրջապատող աշխարհը, գիտելիք է ձեռք բերում ամենատարբեր հարցերի շուրջ: Հստակ խնդիրներ ու նպատակներ ունեն հատկապես մտավոր խաղերը, զարգացնել երեխայի հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, քանի որ առանց այդ հատկանիշների անհնար է երեխային ամբողջովին զարգացնել:

Կրտսեր դպրոցականի համար առաջատար գործունեություն է դառնում ուսումը: Սակայն դեռ երեկ իր զվարթ խաղերով տարված դպրոցականը չի կարող լիովին զերծ մնալ դրանցից: Այդ պատճառով, երբ ուսուցումը խելամտորեն զուգակցվում է խաղերով երեխայի համար բացվում է մի նոր առավել հետաքրքիր սրտամոտ ու ցանկալի աշխարհ: Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ դասարանում ստեղծվում է յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ-աշակերտ և ինչու չէ, նաև աշակերտ-աշակերտ հարաբերություններում մինչև այդ կար ինչ-ինչ պատնեշներ, ապա դրանք աննկատելիորեն անհետանում են: Խաղի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առաջնային են դրա ճիշտ ու ժամանակին կազմակերպումը և անցկացման հարմար մեթոդները:

Խաղը կազմակերպելիս անհրաժեշտ է, որ խաղը և կանոնները հասկանալի լինեն երեխաներին, խաղի բովանդակությունը համապատասխան լինի խաղացողների գիտելիքների մակարդակին, խաղը նպաստի գիտելիքների հարստացմնաը և հետաքրքրությունների ձևավորմանը:

Հետազոտությունն անցկացրել եմ առաջին դասարանում: Խաղի միջոցով փորձել եմ հասկացությունները բացատրել հետևյալ կերպ.

Անհրաժեշտ պարագաներ ՝ թվային, գումարման, հանման և հավասարման նշանով քարտեր:

Առաջարկում եմ աշակերտներին կազմել արտահայտություններ իրենց մոտ եղած քարտերով:

Ուսուցիչ -Կազմե՝ք 5 և 2 թվերի գումարը:

Քարտերով աշակերտները մոտենում և կազմում են արտահայտություն:

Ուսուցիչ- Գտե՝ք այս արտահայտության արժեքը :

Աշակերտներ-7

Աշակերտը,ում մոտ յոթն է մոտենում է :

Ուսուցիչ-Ի՞նչն է պակասում , որ արտահայտությունը դառնա հավասարություն:

Աշակերտներ- Հավասարման նշանը:

Մոտենում է հավասարման նշանը:

Այսպես լավ է տպավորվում երեխաների մոտ նաև + և - գործողությունների բաղադրիչների անունները:

Ինչպես գիտենք, բանավոր հաշիվը կարևոր մաս է կազմում մաթեմատիկայի դասաժամերին: Խաղը այն միջոցն է որով կարելի է ներգրավվել բանավոր հաշվի մեջ անգամ ամենաթույլ ու անվստահ աշակերտին: Կարելի է կազմակերպել նմանատիպ խաղ:

Անհրաժեշտ պարագաներ՝ երկկողմանի թվային քարեր օր.՝ մի կողմը 2, մյուսը 20:

Խաղ- հաշիվը սկսում է ուսուցիչը՝ցույց տալով իր մոտ եղած քարտը:

Ուսուցիչ- Ինձ մոտ տասը թիվն է,ում մոտ է այն թիվը, որը տասից փոքր է յոթով:

Աշակերտ- Ինձ մոտ է:Ինձ մոտ 3-ն է :Ում մոտ է այն թիվը,որը 3-ից մեծ է 2-ով և այլն:

Այնպես յուրաքանչյուր աշակերտ ուշադիր լսում է, մտքում հաշվում, որպեսզի հասկանա հաջորդ հարց տալու հնարավորությունը իրենն է, թե ոչ:

Ինչպես գիտենք, երեխաների ուշադրության զարգացման գործում մեծ դեր ունեն թարմացնող վարժությունները: Առաջարկում ենք ֆիզկուլտ դադար, որի միջոցով կլիցքաթափվեն երեխաները:

Հաջորդ խաղը կարելի է կատարել թե՝մայրենիի, թե՝մաթեմատիկայի ժամերին:

Դերային խաղեր

Դերային խաղի միջոցով սովորողը ձեռք է բերում մի շարք հմտություններ. խոսքի և արտահայտչականության զարգացում, ընթերցանության հմտությունների զարգացում, աշխատանք խմբերով մեդիահմտությունների զարգացում,

տեխնոլոգիական հմտությունների զարգացում, երաժշտության, պատկերի, գույների զգացողության, ճաշակի զարգացում անկաշկանդ ինքնարտահայտվելու կարողություն, ինքնահսկում: Համատեղ ստեղծված աշխատանքի հաջող լինելու դեպքում այն կարող է վերածվել թատերական ներկայացման: Այս մեթոդի կիրառման միջոցով սովորողները, ինչպես նաև դասավանդողը, կսովորեն խաղալ իրենց «դերը» կյանքում: Ինչպես ասում էր Վ. Շեքսպիրը՝ «Կյանքը թատրոն է, մարդիկ՝ դերասաններ»:

Ավարտի՛ր բառը

Խաղի նպատակները. Սովորեցնում է բառերը ճիշտ վանկերի բաժանել, զարգացնում է երեխաների բառապաշարը, դաստիարակում է ուշիմություն, մտքի սրություն, մշակում է վերլուծելու և համադրելու կարողություններ:

Անհրաժեշտ պարագաներ. Վերցնում ենք մի քանի բառ, վանկատում ենք: Յուրաքանչյուր բառի առաջին վանկը գրում ենք թղթերի վրա և լցնում ծրարների մեջ: Օրինակ՝ կա-մա, հա-պա:

Խաղի ընթացքը. Դասարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալիս ենք մեկ ծրար, որի մեջ լցված է չորսից հինգ վանկ:

Առաջադրանք. Երեխաներին հանձնարարում ենք ամբողջացնել բառը՝ տրված վանկին ավելացնելով մեկ վանկ:

Խումբ-խումբ աշակերտներն ավարտում են աշխատանքը, ապա յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքի արդյունքը: Օրինակ՝ կա-պիկ, -ղամբ,-ռապ,-տու և այլն: Խրախուսվում է այն խումբը, որն ավելի շատ բառեր է կազմել:

Դասընթացի դիտարկումներ

Սովորողի բնորոշ վարքագիծ	Տվյալ վարքագիծը բնորոշող աշակերտների թիվը կամ անունները
Ցուցաբերում է հետաքրքրություն, մասնակցում է դասի ընթացքին	16
Ուշադիր հետևում է դասի ընթացքին	14
Պատասխանում է հարցերի	9
Կատարում է գրառումներ տետրում	8
Պաշտպանում է սեփական տեսակետը	8
Կատարում է տրամաբանական առաջարկներ	9
Ընկերներին բացատրում է անհասկանալի հարցերը	4
Անտարբեր է	2

Այլ վարքագիծ	-

Աշակերտի դիտարկման քարտ

	Այո	Ոչ	Այլ պատասխան
Դասի թեման հետաքրքիր էր	V		
Դասի վերաբերյալ հարցեր եմ տվել		V	
Պատասխանել եմ թեմայի վերաբերյալ հարցերին	V		
Առաջադրանքը կատարեցի հեշտությամբ	V		
Առաջադրանքը հետաքրքիր էր	V		
Առաջադրանքը ցանկանում եմ նորից կատարել	V		
Դուր եկա՞վ քեզ	V		
Կփոխեի՞ր որևէ բան	V		

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն աշխատանքը, հետազոտության և վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները:

Աշխատանքի արդյունքը խաղերի կազմակերպման և դրանց ուսումնասիրության մանկավարժական փորձի ընդհանրացումն է, եզրակացություններ են արվում խաղի կարևորության մասին երեխայի մտավոր և ֆիզիկական զարգացման համար:

- Խաղը կրտսեր դպրոցականի համար ուսուցման լավագույն միջոցներից է:
- Խաղի ընթացքում է, որ ուսուցիչը ավելի լավ է տեսնում երեխայի ուշադրությունը, ինքնավստահությունը, արագաշարժությունը, շուտ կողմնորոշվելու ունակությունն ու ճարպկությունը:
- խաղի նշանակությունը չի կարելի գնահատել միայն ժամանցային հնարավորություններով, դրանում է խաղի հզորությունը , այն երեխայի համար կարող է դառնալ ոչ միայն ժամանցի ու հանգստի կազմակերպման միջոց, այլև հիմք հանդիսանալ նրանց տրամաբանական մտածողության և արագ կողմնորոշվելու ունակությունների զարգացմանը,
- խաղային տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ՝ ցանկացած նյութ երեխաների համար դառնում է ավելի հասկանալի ու հաճելի,
- Օգտագործելով խաղային մեթոդները կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում կարելի է գալ այն եզրահանգման, որ դասը դառնում է ավելի արդյունավետ ու նպատակային:
- Խաղի ընթացքում երեխան տիրապետում է վարքի բարոյական նորմերին ու կանոններին, որոնք որոշիչ դեր են խաղում նրանց անձի ձևավորման գործում: Զարգանում է աշխատասիրություն, ուշադրություն և պատասխանատվության զգացում:

Խաղերի կազմակերպման դիտարկումների և փորձի հիման վրա բացահայտվում է խաղի զարգացման մակարդակի և տեսակի կախվածությունը

տարիքային բնութագրերից։ Ներկայացված են նաև խաղերի կազմակերպման մեթոդական առաջարկություններ։

Որպեսզի խաղը լինի երեխայի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց, խաղեր կազմակերպելիս և վարելիս պետք է պահպանվեն հետևյալ պայմանները.

1. զգացմունքային (երեխային գրավելու, հաճույք, ուրախություն տալու համար);
2. ճանաչողական, կրթական (երեխան պետք է նոր բան սովորի, ինչ-որ բան սովորի, որոշի, մտածի);
3. խաղերը պետք է լինեն սոցիալական ուղղվածություն:

Ուսուցչի հիմնական նպատակն է հետևողականորեն կառավարել յուրաքանչյուր երեխայի և ամբողջ թիմի համար անկախ խաղի ձևավորման գործընթացը, քանի որ երեխայի մտավոր զարգացման վրա ամենամեծ ազդեցությունն ունի միայն երեխաների անկախության տեսքով խաղը: Սա է նրա մանկավարժական արժեքը։ Անհրաժեշտ է, որ խաղը չկորցնի իր արժեքը, ազատությունն ու հեշտությունը։ Անհրաժեշտ է հաշվի առնել անհատական և տարիքային առանձնահատկությունները: Այս պայմաններում խաղը ծառայելու է երեխայի զարգացմանն ու դաստիարակությանը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բարսեղյան-«Խաղերը ուսուցման արդյունավետ միջոց»-Երևան 2001թ.
2. Մ. Սիմոնյան- «Խաղը որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության Բարելավման միջոց »- Երևան 2004թ.
3. Հ.Մամյան-«Խաղը որպես ուսուցման միջոց:Խաղերի կիրառությունը դպրոցում»- Երևան 2013թ.
4. Ֆ.Աճեմյան-«Հիշողությունը զարգացնող խաղեր»-Երևան 1999թ.
5. Ա.Օհանյան-«Ուշադրությունը զարգացնող խաղեր»---Երևան 2007թ.
6. Ն.Գրիգորյան--«Ուշադրությունը զարգացնող խաղեր»---Երևան 2012թ.
7. Ա.Բաղդասարյան-«Խաղալով սովորեցնենք»-Երևան 2001թ.
8. Վիգոտսկի Լ. Ս. Մանկավարժական հոգեբանություն. - Մ.: Մանկավարժություն, 1991:
9. Վիգոտսկի Լ. Ս. Երևակայությունը և ստեղծագործականությունը մանկության մեջ. - Մ., 1991:
10. Լևիտով Ն.Դ. Դեռահասների հոգեբանական բնութագրերը. - Մ .: Կրթություն, 1967:
11. Ուսովա Ա.Բ. Խաղի դերը երեխաների դաստիարակության գործում. - Մ., 1976: